ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ПУБЛИКАЦИИ

ԵՂԻԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայ մշակույթի պատմության երախտավորներից մեկն է Իլյաս Մուշեղյանը (Եղիա Կարնեցին), որի հասարակական ու գրական գործունեությունը դեռևս ըստ արժանվույն չի ուսումնասիրված։ Նրա անունը հայտնի է միայն գրականագետների ու պատմաբանների նեղ շրջաններում։ Եղիա Մուշեղյանի թողած գրական ժառանգությունը այնքան նշանակալից է, որ իրավունք է տալիս նրա անունը դասելու միջնադարի հայ մշակույթի աչքի ընկնող գործիչների շարքում։

Եղիա կամ Իլյաս (ինչպես ինքն է գրել բազմիցս) Աստվածատուրի Մուշեղյանը գործել է XVIII դարի առաջին կեսին։ Նա ծնվել է 1689 թ., Խոտորջրի շրջանի Կրման գյուղում, մահացել է մոտավորապես 1750—1751 թթ.։

Նա իր ժամանակի ճանաչված և մեծ կապեր ունեցող վաճառականներից էր։ Եղել է Պարսկաստանում, Թուրքիայում, Անդրկովկասում, Ռուսաստանում, մի շարք եվրոպական երկրներում։ Երկար տարիներ ապրել է Թավրիզում, առևտրական կապերի մեջ եղել մի շարք երկրների, այդ թվում Հյուսիսային Ադրբեջանի, հատկապես Շամախիի և Ջուլֆայի հետ։ 1724 թ., Աստրախանում գտնվելու ժամանակ, քաղաքական հողի վրա Եղիա Մուշեղյանը բանտարկվել է ցարական կառավարության կողմից։ Բանտից ազատվել է 1736 թ.։ Մահացել է Կարին քաղաքում։

Աստրախանում բանտարկվելու ժամանակ բռնագրավվել են Եղիա Մուշեղյանի անձնական փաստաթղթերը, որոնք հետագայում հանձնվել են պետական արխիվ։ Այժմ այդ փաստաթղթերը գտնվում են ՍՍՀՄ Արտաքին գործերի մինիստրության Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում և գրանցված են «Ռուսաստանի առնչությունները Հայաստանի հետ» ֆոնդում[1]*։*

Եղիա Մուշեղյանի գործում պահվող նյութերը ցույց են տալիս, որ նա եղել է լայն հետաքրքրությունների տեր մի անձնավորություն, կապ է պահպանել ժամանակի նշանավոր դեմքերի հետ (Իսր. Օրի և ուրիշներ)։ Եղիա Մուշեղյանի բազմաթիվ նամակների մեջ կա նաև Իսրայել Օրուն ուղղված նրա նամակը[2]*։*

Եղիա Մուշեղյանը մեծ հետաքրքրություն է ցուցաբերել գեղարվեստական գրականության նկատմամբ։ Հատկապես մեծ է ադրբեջանական գրականությանը մատուցած նրա ծառայությունը։ Եղիա Մուշեղյանը առաջինը հավաքել և հայերեն տառերով գրի է առել ադրբեջանական բանահյուսության և գրականության մի շարք արժեքավոր նմուշներ և ստեղծել մի հիանալի «Գիրք խաղից», որ նա սկսել է 1721 թ., Թավրիզում։

Ահա ինչ է գրում նա այս գրքի ստեղծման շարժառիթների մասին։

«Գիրք խաղից երաժշտականաց յարմարեալ այլ և այլ արանց և պես-պես կապակցութեանց խորթնա յիմաց իրաց այսինքն բանաստեղծ արանց հնարեալ, վասն այնորիկ կամեցա հնարեալ սրանց ամմունքն գրել աստ լուեալն իմ որ 'ի մարմնաւոր խրախութիւնս նխպայրց. այսու ուրախանալն լաւ համարիմ քան թե բանբասախօսել զայլսն»[3]*։ «Խաղերի գիրքը» մեծ նշանակություն ունի ադրբեջանական գրականության պատմության համար։ Այնտեղ հավաքված են ադրբեջանական բանաստեղծների ոչ մի այլ աղբյուրում չհայտնաբերված, ուրեմն սկզբնաղբյուրի նշանակություն ունեցող շատ ստեղծագործություններ։*

Իր գիրքը կազմելիս Եղիա Մուշեղյանը օգտվել է թե՛ բանավոր, և թե՛ գրավոր աղբյուրներից։ Հատկապես աշուղական բանաստեղծությունները նա հիմնականում քաղել է բանավոր աղբյուրներից։

Եղիա Մուշեղյանի հայատառ ժողովածուում կան ադրբեջանական մի շարք հայտնի բանաստեղծների, այդ թվում՝ Նասիմիի, Ֆիզուլիի, Կովսիի, Շահ Իսմայիլ Խաթայիի, Շահիի բանաստեղ-

---

[1] Архив внешней политики России (АВПР), фонд «Сношения России с Арменией». 1724 г., оп. 101/1.

[2] *Նույն տեղում, գործ № 2, «Г», էջ 89։*

[3] *Նույն տեղում, գործ № 3, էջ 2։*

ծությունները։ Միևնույն ժամանակ այստեղ մենք գտնում ենք Քյորօղլու, Քյարամի և Ղարիբի անվան հետ կապված երգեր, Դադա Կուրբարի, Ռիզվանի, Դարզի օղլիի, Մահամմեդի, Ահմեդի, Միրզա Ալիի, Հուսեյինի, Ֆիգայիի, Յակուբի, Ագիլի, Մահմուդ օղլիի, Էմինի, Նաչարի, Ֆասեհի, Մահմուդի, Մանսուրի, Իսմայիլի, Կարաջա օղլանի, Երիմ Այգընի, Սաֆիի, Շահկուլի Մուրթուզա-կուլի բեկի, Շամախեցի Միրզա Ալիաքպերի, Սաֆիկուլի բեկի, Յուսուֆի բազմաթիվ չափածո գործեր և այլն։

«Խաղերի գրքում» մեծ տեղ է տրված նաև հայ աշուղների ադրբեջաներեն տասնյակ ստեղծագործությունների։ Դրանցից կարելի է հիշատակել Միրանին, Մաջնունին, Ղազարին, Սարդսին, Քուչակին, Միրաքին և ուրիշների։

Եղիա Մուշեղյանի ժողովածուում կան նաև նմուշներ թուրքական բանաստեղծների երկերից։ Այդպիսին է Աղվան Խաթուն անունով բանաստեղծուհու «Ասեք» ոտանավորը։

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում ժողովածուում ամփոփված բազմաթիվ ադրբեջանական բայաթիները. հանելուկները, առածները և բանահյուսության այլ ժանրի երկեր։

Ե. Մուշեղյանի «Խաղերի գրքից» մինչև այժմ տպագրվել են միայն Միրանի բանաստեղծությունները և ադրբեջանական բայաթիները։

Հայ և ադրբեջանական ժողովուրդների դարավոր բարեկամության և գրական-կուլտուրական սերտ կապերի վառ արտահայտությունը հանդիսացող «Խաղերի գիրքը» անհրաժեշտ է օր առաջ դարձնել ընթերցողների լայն հասարակության սեփականությունը։

Նշանակալից արժեք են ներկայացնում նաև Եղ. Մուշեղյանի գրի առած ժողովրդական առակները և «Հովուական խաղն ի գիշերին՝ ծննդեան փրկչին մի Քրիստոսի» պիեսը։

«Հովուական խաղ» պիեսը Եղիա Մուշեղյանը թարգմանել է ֆրանսիական միջնադարյան գրականությունից, չնշելով հեղինակի անունը։ Ենք կասկածում, որ Եղիա Մուշեղյանին այդ պիեսը տրամադրել է նրա ծանոթը՝ Թավրիզի ֆրանսիական դեսպանը։

Պիեսը արժեքավոր է ինչպես հայ թարգմանական գրականության, այնպես էլ հայ-ֆրանսական կուլտուրական հարաբերությունների պատմության համար։

Եղիա Մուշեղյանի արխիվում (գործ № 7) պահպանված գործերից առավել մեծ արժեք են ներկայացնում առակները։ Վերջիններս գրի են առնված 1722 թ. հունվարից սկսած Թավրիզում, ուր այդ ժամանակ ապրում էր Եղիա Մուշեղյանը։ Առակները գտնվում են հեղինակի՝ ֆրանսերեն լեզվի ուսումնասիրությանը վերաբերող տետրում։ Այդ տետրի 1-ին էջում Եղիա Մուշեղյանը իր ձեռքով գրել է, որ ֆրանսերենը սկսել է ուսումնասիրել 1722 թ. հունվարին։ Առակներին հաջորդում են նրանց ֆրանսերեն թարգմանությունները։

Եղիա Մուշեղյանի առակները արժեքավոր են իրենց ինքնուրույն և ինքնատիպ շարադրանքով։ Եթե հաշվի չառնենք գրաբարյան հատուկենտ ձևերը, ապա առակները աշխարհաբարով գրված հայկական արձակի հետաքրքիր նմուշներից են։ Խոսքի և մտքի ճկունությունը հատուկ է Եղ. Մուշեղյանի տետրում եղած բոլոր այդ առակներին։

Նկատի ունենալով Եղիա Մուշեղյանի առակների պատմական և գրական արժեքը, դրանք (31 առակ) ներկայացնում ենք ընթերցողի ուշադրությանը, պահպանելով բնագրի ուղղագրությունը։

ԱՔՊԵՐ ԵՐԵՎԱՆԼԻ

ՓՈՔՐ ԱՌԱԳԱՑ ՀԱՅ ԳՐՈՎ ԵՎ ԲԱՌՈՎ

1. ԱՔԼՈՐ ԵՎ ԱԼՄԱՋ

Մեկ խօրօղ մեկ օր գետինն քութութ էր անում, աղբի մէջն մեկ լաւ ալմազ գտաւ, ճանկի մէջն բռնեց և աչքերն վրեն պշուցելէր. ասաց. հերե սա մին պատահական ալմազ. մեկ ալմազթրաշ շատ փող կուտեր, որ էս առներ. ամա ի՞նչ պեթք ա մեկ ալմազ մեկ աքլորի, էլ լաւ էր ինձ, որ մին դարի հատ գտնէյի կամ մին փոքըր հացի փշրանք...

Խրատ

Իմաստուն մարդ էն անջախ կուզե, որ իրան պետք է. ինչի՞ ման ես դալիս էնտուր, որ քիզ պետք չէ։

2. ՄԱՐԴ ՈՒ ԸՆԿՈՒԶԻ ԾԱՌ

Մեկ մարդ մեկ օր մին մեծ ընկզի ծառի տակն կշտիե յընել։ Ընկուզի ծառի մօտն կեր շատ-շատ դրդում։ էն մարդն վերևն մտիկ անելով ընկզի ծառին պտղին և ներքևն մտիկ անելով դրդմին, ասում էր իւր մտքումն. ինչի՞ էսենց պստիկ թուփն էսենց մեծ պտուղ կուտայ և ինչի՞ էսենց հաստ ծառն էսենց պստիկ յեմիշ կուտայ։ Կումանքս թե աստված քանզեն ելլաւ գիտէր զատերն շինել մեկ մեծ ծառին պիտէր մեծ պտուղ, և մին պստլիկ թփին պստլիկ պտուղ։

Եբոր էն ասում էր, երեսա մին ընկուզ ծառիցն փրթաւ և ընկաւ իրան գլխի վերեն։ Օ՞վ տէր, աղաղակեց էտի, ամեն ինչ, որ դու շինել ես լաւ ես շինել։ Եթէ ընկզի ծառի յեմիշն էս դրդմի չանք մեծ լինէր ես էլ ողջ չեյի մնալ...

Խրատ

Զարմացիր այն իմաստութին և իրան գործոց վերա։ Զինչոր շինելա ամենևին մի ասել թէ վատէ...

3. ԿԱՏՈՒ ՈՒ ՄԿՆԵՐ

Մին կատու անունն Միտու մի տան միչումն շատ մկներ կբռներ։ Օրն քիչ-քիչ ը՝ ու ժ՝ կուտեր։ Մկներն տեսնելով, որ իրանց ազգն հատնում էր գլխբուումեր։ Բոլորվեցան թէ ի՞նչ անեմք, որ մեր թշնամու զուլմիցն պրծնիմք։ էն բանի վրա շատ ժամանակ խորհելոյ յետև վերչն ամենն միաբանեցան թէ պիտեր մին պստի զանկ կատուի վզիցն կապել. էն ֆանտօվն ասումին. էբոր կատուն գուգայ, որ մեզ բռնէ զանկի ձայնն կլեմք [կլսեմք] և փախչիմք մեր բնի մէջն. էն ժամանակն մին մեծ մուկն, որ կանչել էյին, որ մկներին գնտին վերակացու լիներ, երկու ոտներին վրա կանգնելով էյի անխելք ասաց ծիծաղելով. ձեր միչումն օվա՞ սրտոտ, որ կատուի վզիցն զանկն կապէ. էն խոսք, որ ասաց, ամեն մկներն սուս կացին...

Խրատ

Զարաջ քան զմին իրին հաստատես մին մասլահաթի վրա, նախ լաւ միտք արա, թէ էն բանն լինե՞լու բանա...

4. ԳԵՂԵՑԻ ՈՒ ԽԻԶԱՆՆԵՐՆ

Մին գեղեցի հիւանթ շատ տղերք ուներ. էն տղերքն հանապազ մեկ-մեկի հետ կռիւ կանէյին։ Իրանց հայրն ընտոնց պարիշացնելու համար մեկ օր, որ ողջուկ էն իրան կշտին էյին, շատ ճղքեր առկաւ, ողջուկ միատեղ կապեց, մին դաստա շինեց. յետո էն դաստայ իր ամէն տղեքներին ձեռքն տվեց, ասաց. էս ճղքներն կոտրեցեք եթե դիտեք։ Առան և շատ յուժ արին, որ կոտրեն, ամայ չկարացին։ էն ժամանակն հիւանդն դաստին առնու կբանա, հետ անէ և

ճեղքներն մեկ-մեկ առեալ ողջուկնէլ կկոտորվ առանց ջաֆայ ուտելոյ։ Էն ժամանակն իրան խիզաններին ասաց. հերենա որ ձեզ չհանդիպի. որչանք վախտ մեկ-մեկու հետ պարիշեք մօնչով չի գիտել ձեզ ղարար տալ, ամմա էբոր կու ջոկուեք, ձեր թշնամեաց հեշտ գլնի ձեր տունն քանդել։

Խրատ

Եստօվ գիմանամք, թէ բաժանումն և ջոկումն ամեն չարեաց պատճառն է. զոր օրինակ միաբանութին և սերն ամեն բարեաց պատճառա...

5. ՄԱՐՄԻՆ ՈՒ ԻՐ ԲԱԺԻՆՔՆ

Մին օր մարմինի անդամներն հալոզ իկին հետ կռիւ արարին. մեք ամենեքեան ասումին մարմնի առողջութեան համար անդադար բանիիմք կենում, աչքն մտիկ անելով, ականճ լսելով, լեզու խօսելով, ատամներն ծամելով, ձեռներն բանի կենալով, ոտներն ման դալով. էտ թամպալ ստամոքն պարարտանա կշտնա և շատ մսով լցվի, և էլ ոչինչ անէ։ Բաց թողումք և էստուց յետև էլ իրան համար բանք չը կենամք. ապա սկսան էլ զատ չանել իսկի. աչքն էլ չէր տեսնում, ականճն էլ չէր լսում, լեզու էլ չէր խօսում, ատամներն էլ չէյին ծամում, ձեռներն էլ բանի չէին կենում, ոտներն էլ ման չէյին գալիս. ինչ հանդիպեցաւ մին քանի օր յետև մարմին և ամենայն անդամքն էնչանք տկարացան, որ ըսկի ղուվատ չունէյին. էն վախտ իրանց միչումն ասացին. երբոր մեր միչումն հաշտութին կեր չաղ էյինք և յուժով. անճախ էն ժամանակիցն, որ մեք բաժանվել եմք էս խեղճ հալի մեջն էմք յընկել. ապա պիտի, որ մեր կռուիցն պրծնումք և արաչի պես խաղաղութեամբ կենամք. էն ժամանակն աչքն սկսաւ մտիկ անել, ականճն լսել, լեզուն խօսիլ, ատամներն ծամել, ոտներն ման գալ, ձեռներն բանի կենալ և մեկ քանի օր յետև մարմին և անդամքն իւրեանց տկարութենիցն պրծան...

Խրատ

Շատ հետ որ գուզեմն ուրիշի վատութին անեմք մեր վրեն գուգա. բաժանումն ցրուե, միաբանութին կու պահէ...

6. ՄԵՂՐ ՈՒ ՃԱՆՃԵՐՆ

Մեկ օր մեկ տան մեջն կեր մին ամսան լիքն մեղր. ճանճերն զուտ (?) թռան, էն անուշ կերակրի համն տեսնուն. ամա երթալն փոշիմանեցան, զերա էնտոնց ոտներն մեղրիցն կպան բանտ յելան, հենց որ չը գիտացին դուս գալ, խեխտուեցան.

Մին պառաւ ճանճ, որքան զենտոնք շատ խելք ուներ, կասեր մեռնելու վախտն. վայ մեզ ընտուր համար, որ յուղեցինք մին զամեն զովզ անել, մեք չարաչար կու մեռանիմք։

Խրատ

Եւ ամեն օր օրկրամուլութին շատ-շատ չարեաց պատճառա։

Մին պստլիկ զովզ մեղաւոր հեմ հոգւոյն, հեմ մարմնոյն կեանքն կորցնե ինչ խեւութին։

7. ՁԵՅԹՈՒՆԻ ԾԱՌ ՈՒ ԵՂԵՔԻ

Մեկ պաղչի միչումն կեր մեկ ծիթենի և մեկ եղեքի. ծիթենի ծառն հպարտանում էր, և ինքն զինքն գովում էր, թէ արմատքն խորխոր ուներ, մին հաստ փոր, մեծ և բարձր հոքերն և թէ ֆյուռթոնայի և քամուն դեմ էր կանգնում։ Եվ եղեքին ոշխանտ էր անում, և իր տկարութին իրան յերես էր տալիս։ Մին բա-

բակ քամի, որ փչումա, կասեր, ամեն կողմից կեռանաս, և յուժ չունիս որ դեմ կայնիս. էբոր էն ասում էր, ահայ մին սաստիկ ֆյուռթունա վերկուկենա մին մեծ քամօվն։

Եղեքն շուտ կեռացաւ քամու խաթրօվն, և իրան իսկի զարար չելաւ. ծիթենի ծառն պինտ մնաց քամու դիմացաւ, բայց քամին յաղթեց, ծիթենի ծառն քօքահան դետին քցեց։

Խրատ

Հնազանդիր քանդ քեզ յուժօվեն, սկի մի պարծացնել քեզ թէ քանդ ուրիշներն մեծես. ամենևին մարդի մի անարգել իր բնական պակասութենից։

8. ՄԻՆ ԷՇ ՈՒ ՄԻՆ ԳԵԼ

Մին փուշ էր մտել մին իշի ոտն, հենց որ չէր գիտել մանգալ. գետնի վրեն էր յընկել։ Տքալով (վայելօվ) աղաղակելօվ խիստ արտասուք էր թափում, մին գել էնտեղանց անց կացաւ, և տեսնելօվ զէշն էն խեղճ հալի մեջ խեղճ եկաւ, էշն գելին ասաց. ահայ աղայ, եթե գուզեյիր իմ ոտիցս էն փուշն հանել, ես քանի կենդանի եմ քո լաւութին չեմ մոռանալ։ Մոտ կանա գելն և էբոր իշի ոտիցն իր ատամներօվն փուշ էր հանում, էշն սկսեց արցի տալ, և իր յետի ոտերօվն խեղճ գելի ատամներին և չանեքն ջարթեց. ասում են թէ գելն էն ժամանակն աղաղակեց. վայ ինձ, էստուց առեջ իմ փեշակն էս էր, որ ուրիշ անասներն կսպանեի, և կուտէյի և ես ուզեցի այսօր իրանց հեգիմութին անել. էն գտայ, որ ինձ արժան էր։

Խրատ

Դուն քո արուեստն բանացոր, տես ինչոր գիտես էն արայ...

Մարդ կա որ քան զեն էշն էն անասուն էն։ Որչանք որ նրանց լաւութին անես, էնչանք առաւել քեզ վատութին անեն...

9. ՁԱՂՈՒԵՍ ՈՒ ՄԱՐԴԻ ԳԼՈՒԽ

Մին աղուեսն քաղաք եկաւ ման գալ, մին քանտարարի խանութ մտաւ, տեսաւ մին փայտէ գլուխ խիստ լաւ շինած, առաւ իր առաջն ու ոտներով և լաւ մտիկ անելօվ. յետո ահա ասաց մին սիրուն գլուխ դրսիցն. ափսոս որ մեջն փուչ։ Մին դրամ եղուղ չունի...

Խրատ

Մարդկանց և կանանց մեջն շատ կկտնի... այնպես կերպարանքով, սիրուն, լաւ հագած ակնկալած, ոսկով և արծաթով զարդարած, ինչոր դրսիցն երևումա լաւա, ամա մեջ փուչէ. շատ անգամ այնպիսիքն անիսելք, և անգետք էն։

10. ԷՇ ՈՒ ՁԻ ՈՒ ԳԵՂԵՑԻ

Մին գեղեցի մին էշ, մին ձի ուներ, էնտոնք բանացնում էր, որ իր ցորենն քաղաքն տանին, և ծախե։ Մին օր որ ճամփումն էր, էշ ձիան ասաց. ախպեր, մեր տերն իմ քամակին վրան դրել ա մին կրկին ծանր բեռն, խիստ ծանրա, չեմ գիտել տանիլ. շաֆախաթ արա էստուց մին փոքր վեր կալ, թէ չէ ես իմ բեռի տակն վերկընկնիմ և կմեռնիմ։ Ձին իրան պատասխան էրետ ասաց. ախպեր, ամեն մեկ իրան բեռն տանի շատ չէ. իմ բեռնել ա ծանր, բեռնդ տար դոր որ գիտես. ապայ էշն ուժ կանէ և առաջ կերթայ 2—3 սահաթ, ամա վերչն ուժահատ բեռնտակն ընկնի և մեռնի։ Էն վախտն դեղեցին էշի բեռն վերկլնու և ձին վրեն դնե, յետև էշն մաշկէ, և կաշին էլ դնէ ձիան վերա։ Վայ ինձ ասաց էն ժամանակ ձին, որ ամեն մեկ քայլ էրթալօվ քթահար էր անցնում էնչանք

ծանր բեռի տակն, վայ ինձ, ես չուզեցի էշի բեռն թեթևացնել, ամա պիտի համ թամամ բեռն համ իշի կաշին էլ տանիմ...

Խրատ

Ամեն օր կհանդի որ օվ որ չի յուզել մին քիչ ճաֆա քաշէ, մեծ ճաֆի մեջ կնկնի։ Որչանք գիտես ամեն մարդի շաֆախաթ արա, քանի որ մարդի լաւութին կանես, քեղէ շահ գլնի։

11. ԶԱՌԻՈՒԾ ՀԻՒԱՆԴ

Մին օր առիուծն հիւանդացաւ. էբոր ուրիշ անասունքն էն խապարն իմացան, ամեն բոլորվեցան, դաս-դաս եկեն առիուծի բունն իրանց թագաւորին տեսութին. աղուեսն իրանց հետ չէր։ Գել, որ վաղուց հետ էն աղուեսի հետն քենէր, էն մահանայ բռնեց որ քեն հանէ։ Տես վելինամաթ ասաց, տես աղուեսի հպարտութին, որ չունքու արժան չը տեսաւ, որ մեղ հետ դեր քո հրամնուց տեսութին քո հալտ հարցանէր։ Էն գելի խօսքերն առիուծին բարկացուցին աղուեսին դեմ։ Էն վախտ աղուեսն կհասնի և առիուծն բառանչելով հարամզադայ կասէ, էտպես քո թագաւորին կպատուես կտեսնես թէ ուրիշ ամեն կենդանիքն իմ առաչեն խոնարհեցան, դու միայն քո թագաւորին անհնազանդութին էս անումում [անում]։ Աստված լաւութին և երկար կեանք տայ իմ թագաւորին ասաց աղուեսն։ Հավատայ վելինամեթ թէ էն կենդանէաց ոչօվ քանզիս սրտացաւ չէ էլել վասն քո լաւութեն. ես ամեն հեքիմներն, ճառահներն և աթթերներն տեսա, և էնկանք ման եկա, որ վերչն քո ցաւին դեղ գտա։ Բարօվ եկար ասաց աղուեսին առիուծն կակղացեալ, ինձ թեզ ասա, որնա դեղն, որ պիտի ինձ լաւացնէ։ Աղուեսն ասաց. հեքիմներն բոլորվեցան մասլահաթ տեսնելո, հետև ողջուկ միաբանեցան թէ քո հրամանուց լաւացնելոյ համար քան զայն լաւ դեղ չըկեր որ թազա մորթած գելին մորթօվն պատատվիս. էն վախտ առիուծն թռաւ գելի վրեն, խեխտեց, մաշկեց և մորթօվ նորա զինքն պատատվեց։ Ասում էն թէ էբոր գելն հառաչում էր աղուեսն իրան վրա ոըշխանտ անելով. սովրիր, բիճ և անիրաւ, թե բանպասող և կռուանի ախր-ախր փորձութենց ընկնին որ ուզում էն ուրիշի վրայ ղցել...

12. ՄԻՆ ԳԵԼ, ՄԻՆ ՊԱՌԱՒ

Մին գել քաղցած չիմանիցն դուս ելաւ եկաւ մի գեղ. մին գիշեր որ ման էր գալիս էս տեղ էնտեղ լսեց մին պառաւ կնիկն, որ սուս կացնելու համար մին երեխա, որ լալիս էր, ասեր իրան. սուս կացիր, թէ չէ քեղի դելին կուտամ, որ ուտէ. ուրախացեալ գելն կուգայ տան մօտն որ իրան որսն տանի. անկաճ դնելով լսեց թէ պառաւն ասում էր երեխին իրան խտրտին խաղացնելով. մի վախենալ որդի, եթե գելն գուգա կսպանեմք. էնչաղ գելն ամանչութենօվ գնաց ասելով. էստեղ իսկի ֆայտա չրկայ. ուր մին կերպ կասեն ուրիշ կերպ անեն։

Խրատ

Մի հաւատալ էն մարգի, որ իրան լեզու և իր սիրտն միաբան չեն...

13. ԶԱՂՈՒԵՍ ՈՒ ՀԱՂՈՂ

Մին օր մին աղուես քաղցեցած ման էր գալիս ուտելոյ համար. տեսաւ մին մեծ ճիթ հաղող, որ վաղնի մին ճխբիցն կախ էր. շատ հետ վեր թռաւ, որ ափե, ամա տեսնելով, որ նման չէր որ ափե, բաց եթող, ասելով. բաց թողումք հասնի դեռ ժուռ ա [չի հասել]։

Խրատ

Մարդ հպարտ համիշա մին մահանա կբռնէ, որ իր տկարութին յայտնի չը լինի...

14. ՁԱԳՌԱՎ ՈՒ ԱՂՈՒԵՍ

Մին ագռավ մին ճոթ պանի[ր] առնալ էր մին տան կտրիցն։ Ընկուզի ծառի ծայրին նստել էր որ ուտէր։ Աղուես իրան տեսաւ որ բերանումն պանիր ուներ, այ պարոն ագռաւ, ասաց, ինչ որ քեզ վրա ինձ ասացել էին ողորդ ա. թէ ամեն հաւքի մեջ քանզ քեզ սիրուն չըկայ, քո թեպուրն (փետուրն) ձնի պես սպիտակ ։սյ և թէ ձայն ունեյիր էնչանք քաղցր, որչանք քո թեպուռն սիրուն ա, իրաւի արժանի կլնեյիր անասնոց թագաւոր դառնալ. ագռաւն աղուեսի թիթալն սրտի տաքութենով կլսեր, և հպարտութենով ուռեալ սկսաւ ձայն հանել, իր կտուցն բռանց բացել էր պանիրն ծառի տակն վայր ընկաւ. աղուեսն հափեց, և ագռաւի վրա ոըշխանտ անելոյ հետ և փախաւ գնաց...

Խրատ

Օվ որ քեզ հետ թիթալ կու խոսի և քեզ կգովէ շատ անգամ քեզ վրայ ոոշխանտ կանէ, և ուզումա քեզ խափե...

15. ՁԱՂՈՒԵՍ ՈՒ ԼԱԿԼԱԿ

Մին օր աղուեսն արագիլին պատիւ կանչեց բթուն պատուի, լակլակի առաջեն մին մեծ լանկառօվ խիստ ջրի դիմա (?) բերեց, լակլակն չէր գիտում ուտել, ղայթաղ իր ձիգ-ձիգ կտցի ծայրօվն. ամա հաս հապասեր կտցատում քիչ-քիչ էր հափում, ամմա աղուեսն Ռ. Ռ. թիքա արաց ողջուկն կուլ տուեց, ապայ արագիլն խիստ ամօթօվը մնաց, աղուեսի բնիցն քաղցած դուրս ելաւ։ Մին քանի օր յետև արագիլն էն ամաչութենի քենն հանելոյ համար աղուեսն պատիւել կու կանչի և դոր ինքն առաջ արներեր իրայ կուշտն կու բերե մին խիստ ջրի ղալիյեայ պլօր շիշի մեջ, շիշի վիզն ձիդե ձիգ էր։ Աղուեսն որ ղալիա տեսնում էր շիշի մեջն շիշի կշաերքն լիղում էր, ամա հապտս-հապաս, իսկի զատ չէր ափում։ էն չաղն արագիլն ուր ձիգ կտուցն կոխելօվ շիշի վզի մեջն ողջուք ղալիայ կերաւ ապայ աղուեսն շարմանդայ մնաց և խիստ քաղցած դուն գնաց...

Խրատ

Օվ որ ուզումայ ուրիշի խափէ արժան է որ ինքն խափուի։

16. ՁԱՌԻՈՒԾ ՈՒ ՄՕԾԱԿ

Մեկ օր մօծակն առիուծի կուշտն իրան ասաց. ասում էն թէ դուն քան զամեն անասուններն ուժօվ էս, տեսնումք եթե ողորդ է եկել եմ քեզ հետն քուշտի բռնեմ։ Դու ո՞վ ես, ասաց առիուծն, և որչանք պիտի ըլնի էնչանք պստլիկ անասունին յուժ. յել տեսնեմք ասաց մօծակն, և նոյն ժամն մօծակ թև առավ թռաւ մտաւ առիուծի քիթն, առիուծն քիթն ճմռթում էր, որ մօծակն քթիցն հաներ, գետին թաւալ.թաւալ էր գալիս. իր քինթն, և իր դունչն ճանկօվ ճանկռատում էր, ամա հապաս-հապաս, ոչինչ չէր գիտել մօծակն քնթիցն հանել։ էն ժամանակ մօծակն առիուծի քնթիցն դուրս թռեաւ, տեսիլ էս ասաց, թէ դոր ես քան զքեզ էլ յուժով եմ, էրոր թռչում էր իր յաղթութեն համար հըպարտ, ահայ իր անբախտութենով կնկնի գործարարի գործի մեջն. էն տեղ բանտ կմնայ գործարարն շուտ գուդայ, իր գործօվն մօծակին կպատատե, կբռնե կուտե, վայ ինձ ասում էր հոգևար մօծակն, առիուծին յաղթեցի, որ է

անասնոց թագաւոր, և ահայ կերակուր դարձեալ եմ ճանավարին, որ քան վիս էլ փիս այ։

Խրատ

Քո թշնամիցն հանապազ վախիր և իրանիցն պատրաստ կացիր որ չանք տկար լինի գիտե քեզ վնաս տայ. ինչ բարի գործ որ գործես և որ չանք շնորք որ ունիս մի հպարտանալ, շատ անգամ դեմ կանգնիմք և յաղթեմք մեծ փորձութենց մեջն, և թեթև փորձութենց մեջ յաղթիմք...

17. ԳԵԼ ՈՒ ԳԱՌՆ

Մին օր մին գառ ու մին գել մին արուիումն ջուր ին խմում. գելն վերևն գառն ցածն. գելն գառին շլթաղ անելով շան որդի, ասաց, ինչի պղտորես ջուրն որ ես խմում եմ. թողութին արա պարոն ասաց գառն վախից դողալով. դոր ես գիտեմ պղտորել ջուրն որ դու կիմես. չունքի դուն վերև էս, ես ցած, լաւ ասաց գելն էս բաց թողնիմք. ամա մտիտ չէ, ասաց, թէ մին տարի կայ որ դու պատճառ ես ելել որ շներն ինձ կծատեցին. ես մին տարի չկայ ասաց գառն, հավատա, պարոն բոանց ելբեք ամիսա որ ես ծնել եմ, ինչ որ ըլնի ասաց գելն, քո հայրն կամ քո մայրն ինձ շատ անգամ շատ սիթամ էն արել, պիտի քեզանից քենն հանեմ. գելն էն ասելով գառի վրա թռնում ա կտրում ա ուտում ա...

Խրատ

Աստված մեծատանց բռնութենիցն քեզ պահե. որ չանք անմեղ լինիս եթե կուզեն քեզ վատութին անեն ամեն կերպ մահանա կբռնեն որ իրանց անիրաւ կամքն կատարեն...

18. ՔԱՄԻ ՈՒ ԱՐԵԳԱԿ

Մին օր արեգակ ու քամի մին տեղ գնացին շքար. հասան մին մեծ դուզ և մին սարի ծայրին տեսին մին մարդ որ խոտի վրեն թեք էր ընկած։ Ասացին տկլորացնենք էս մարդուն։ Բաց թող,— ասաց քամին արևոյն, ես անեմ. չէ, ասաց արևն, թող ես անեմ՝ կտեսնես թէ բանն գլուխ կտանեմ։ Քամին կողին յրնկաւ և սկսաւ ղայիմ վարար ուժով փչել, ամա ոչինչ չարաց։

Դրա էն մարդն որ սարի վրեն էր իր շորն դեն չը գցեց, ամա առաւել պատատվեց քամու դեմն, էն ժամանակ արեգակն սկսաւ իր շառավիղովներով շոքացնել։ էն մարդուն, շոքումն փթաթած շորն հանեց։

Խրատ

Ուժով բան չէ լինիլ. ամեն ինչ քաղցրութենով կլինի, հին առակա թե մեղրի կաթնովն էլ շատ հանձ կբռնէ ի քանթէ քացախի կարասովն։

19. ՁԱՂՈՒԵՍ ՈՒ ԱՅԾՆ

Մին օր աղուես ու այծ խիստ ծարավ էյին։ Երկուքն էլ մտան մին հորի մեջ խմելոյ համար. խուշտ խմելոյ յետև ուզեցին հորիցն դուրս գալ ամայ չը կարացին։ էն ժամանակ աղուես էծին ասաց. խաթերջամ կացիր, ես ֆիքրէմ դորպիտի էս տեղանց դուս ելնիմ, պիտի լա քո յետի ոտներին վրա կանգնիս, և քո առաչի ոտներն հորի պատին դեմ դնես, քո կոտոշներն կեռացնես և գըլուխտ ցածացնես սրտի դեմ, ես վերելնիմ, և թոչելով հորիցն դուս կերթամ, և քեզ կհանիմ։ էծն աղուեսին հավատաց և դոր ասացեր էր այնպես արաց, աղուեսն հորիցն դուրս ելաւ, սկսաւ հորի եզրն պար գալ, էծի վրա ոըշխանտ անելով և սկի հոգ չքաշեց, որ էծն հաներ։ էն ժամանակ էծն բարկացաւ աղուեսի վրա և իրան երես տուեց թէ անիրաւ էր, և իր իրղարիցն դուս էր. աղուեսն

իրան ճուղապ տուեց. օվ հիմար և անխելք, եթե քո գլուխտ էնչանք ըկուղ կեր, որ չանք քո միրուքտ մաղ ունի, առաջ քան մտնել ես հորի մեջ միտք կանեյիր թե ինչպես դուրս ելանեմ։

Խրատ

Զառաջ քան սկսել մին իքմին, լաւ միտք արա թէ էն իքմինին վերջն դոր գլնի, եթե գուզես մին զարարի մեջ մտնուս, լաւ մտածէ թե դոր դուս գլնիս։

20. ՈՐՍԱՐԱՐ ՈՒ ՎԵՐԻ ԿՕՎ

Մեկ օր մեկ քանի որսարար գնացին որս տեսին մին վերի կօվ. յետնեն վաղ տուին. վերի կօվ իգու [այգու] մեջ փախաւ գաղուեցաւ. որսարարներն մտան իգու մեջ դես դեն աս կուման այն կուման մանին գալիս, ամա մոնչինչ չգտան. ապա բաց թողին գնացին։ էն ժամանակ վերի կօվը սկսաւ այգօն տերևներն ուտել. որսարարք ձայնն իմացան, սկսան էլ նոր մանգալ և չունքի այգոն տերևներն քիչացել էյին, թաք-թուք ին մնացել, որսարարքն վերի կօվ տեսին մին թափանցրկօվ վեր գցեցին։ Վերի կօվն մեռանելու ժամանակ ասում էր. վայ ինձ, էս տերև ինձ կու պահեր, ես բիաղուհաց և նամեք հարամ լաւի փոխարեն վատութին արի։ Մեռնելու արժանի ելայ։

Խրատ

Նոյն պատուհաս քեզ կհանդիպի եթե չարն հատուցանես փոխանակ բարոյն...

21. ՎԵՐԻ ԷՇ ՈՒ ՏԱՆՈՒ ԷՇ

Մին վերի էշ տան էշն տեսաւ որ ախոռի մեջն հանգիստ նստած էր։ Դարի դարման կուշտ ուտեր։ Նախանձեցաւ իրան վերա, և ասաց. «էրնեկ էն իշուն էրոր ես սարին վրա կկենամ խեղճ, քաղցած ողորմելի, նա զովղ է անում և կուշտ ուտում»։ Մին քան օր յետև վերի էշն տեսաւ տան էշն, որ մեչքի վրեն ծանտր ծանտր բեռն է տանում և էնտուր տերն ծեծելով, թակելով, բզելով քշում էր, էն ժամանակ վերի էշն ասաց. «էստուց հետև քեզ վրեն էլ չեմ նախանձիլ, իմ զօվղն քանց քոնն լաւա, քո ճաֆեն քան զքո սաֆեն էլ շատ ա»։

Խրատ

Մին օր մեք մեծատունն տեսնեմք որ լաւ կուտեն, կուշտ կխմեն, սիրուն հագնին, զօվղ ուրախութին անեն, ամա խապար չեմք թէ իրանց նեղութին, ճաֆա, փորձութին որ չանքայ...

22. ՁԱՔԼՈՐՔ ՈՒ ԿԱՔԱՎ

Մին մարդ հինգ ու վեց աքլոր ուներ, մին կաքաւ առաւ, բերեց, աքլորների մեջ ցգեց։ Աքլորք ամեն օր կաքավին հետ կռիւ կանեյին, թակեյին, կատուցատեյին. կաքաւն խիստ տրտմեցաւ և ինքն իրան մեջն ասում էր. հալպաթթե ինձ հետն էնպես կռիւ էն անում զիրա ես զարիպ եմ, էնտոնց զաթից չեմ։ Մեկ օր տեսաւ թէ որ ձագներն մեկ մեկու հետ կռիւին անում. ասաց. չունքի էնպեսա, էստուց հետև էլ չեմ տրտմիլ։ Եթե էնտոնք իրանց ազգի հետն կռիւ կանին, ինչ զարմանք էն թէ զարիպի հետն միաբան չեն։

Խրատ

Զպայ դու ֆռանկ մի զարմանալ թէ հայոց մեջ գտնվին խրօվասերք, հակառակք կռուանիութք, որք քեզ նեղացնեն, չունքի ամեն օր տեսնես թէ ինքեանք իրանց հետն պարիշ չեն։

23. ՁԱՆԱՍՈՒՆՔ ՈՒ ԱՌԻՈՒԾ

Մին առիուծ ուրիշ հայվաններին հետն ընկերացաւ թէ գնամք որս։ Ղօվլ արարին թէ ինչոր որս կանիմք բաժանեմք։ Գնացին, մին վայրի խոզ բռնեցին. ամեն անասունք եկին բոլորվեցան։ Մինն ասաց էս իմ բաժինա. էն մեկ էլ ասաց էնա իմ բաժին. նույնպես և այլք։ Բարկացաւ առիուծն, վայրի խոզն բռնեց, չորս ճոթ արաց, ասաց. էս ճոթս իմնա զիրա ես քանզ ձեզ մեծ եմ։ էն ճոթն էլ իմնա, զիրա ես քանզ ձեզ ուժով եմ։ էն մեկ էլ ճոթնել իմնա, զիրա ես շատ ճաֆա քաշեցի քան զձեզ։ էս մնացած բաժինն օվ որ գուզե առնու. ես իրան կկտրատեմ։ Ան ասանքն վախեցան, որսն թողին, դարտակ գնացին։

Խրատ

Եթե գուզիս ուրիշի հետ ընկերանաս քո պեսին հետ ընկերացիր։ Կե քան զքեզ մեծի հետ ընկերութին անես, ինչ ղօվլ որ անե թէ քո հախն քեզ կուտամ, վերչ մին մահանա կբռնէ, որ քեզ զրկե։

24. ՍԱՐՆ ՅԸՂԻ

Մին օր մին խապար էլաւ թէ մին սարն ուզում էր ծներ։ Ամեն ժողովուրդ պօլուկ-պօլուկ բոլորվեցան գնացին սարի կուշտն տեսնեն թէ վերջ ինչ գլնի։ Ողջ պաշարել էյին և սերկերտան թէ էնչանք մեծ սարիցն ինչ կու ծնանի։ Սարի ցաւ բռնեց, ծնաւ, բերեց մին պստլիկ մուկն, ժողովուրդ որ տեսան, ծիծաղեցան, գնացին։

Խրատ

Շատ մարդ կայ, որ ինքն զինքն է գովէ, թէ ես շատ հունար ունեմ, էնպես արարի էնպես գիտեմ անեմ, ամմայ ձեռից բան չի վերկալ։ էնպես մարդն արժանիա, որ իրան վրա ոըշխանտ աննեն։

25. ԳԵԼ ՈՒ ԿՌՈՒՆԿ

Մին գել մին ոչխարն բռնել էր, ուտում էր։ Մին ոսկոր ձուռ գնաց, կուլին բանտ ելաւ։ Խեղխճ գելն սկսաւ վայել, ամեն անասներին աղաղակել թէ աստված կսիրեք եկեք մին ճար արեք, իմ կուլիցն ոսկրն հանեցեք։ Վախեցան անասունք, ոնչով սիրտ չարաց որ գելին առաջ երթայ։ էն ժամանակն մին կռունկ անցե կաց, գելն ողորմորաց, ասաց. կռունկ իմ քուրս, քեզ մատաղ երթամ, ինձ օգնությին տուր, դեղ արա, խեխտրվում եմ. թէ էն ոսկրն իմ կուլիցն հաննես, ինչ որ յուզես, էն քեզ կտամ։ Կռունկն եկաւ, իր յերկեն կտուցն կոխեց գելի կուլն ոսկրն հաննեց։ Ասաց. գել ախպեր, հրես ա պրծար, իմ հախն տուր։ Գելն բարկացաւ և [ասաց]. գնայ, դու մուննաթ չես գիտել, թէ զլուխտ իմ բերանումն էր ողջ դուրս եկաւ, էլ ի՞նչ հախես ուզում։ Կռունկն էլ վախեցաւ, թռաւ, գնաց...

Խրատ

Շատ մարդ կայ, որ քան զայն գելն էլ զալում և բի աղու ու հացեն։ Թէ դուն իրանց լաւութին կանես իրանք քո լաւութին չեն յիմանալ։ Էրոր դուն իրանց պեթրականես, ողորմորան, խոնարհին բեղ առաջեն, էրոր իրանց շնորբ արեցիր, քեզ էլ յես չեն տալ։

26. ԴԱՇՏԻ ՄՈՒԿՆ ՈՒ ՏԱՆ ՄՈՒԿԸ

Մին օր դաշտի մուկն եկաւ քաղաք, և տանու մկան պատիւ կանչեց։ Գնացին դաշտն։ Դաշտի մուկն ինչոր աշունք և աղուղա պատրաստել էր, խոտ, հատ, և արմատ, ամեն առաջ բերեց։ Միծաղեցաւ տանու մուկն ասաց. ապայ

էս ա որ ուտես, խեղջ ես, մեք քաղաքումն կուտեմք զմեղր, շաքար, հաց և շատ ուրիշ անուշ կերակուր։ Դաշտի մուկն ասաց. ապա պիտի լա որ ինձ մին օր պատիւ կանչես, տեսնեմ ողորդես ասում։ Աչքիս վրա, ասաց տանու մուկն, էքուց վատայա։ Էքսն դաշտի մուկն եկաւ քաղաքն։ Պատիւն թամամ հաղիր էր և սկսան մի ուտել մին սիրուն օթաղի մեջն։ Էբոր տան տերն դուռն կբանա, ներսն կմտնու մկներն կվախենան, և սոֆրից դողալով վեր կրկենան և կփախչեն իրանց բնի մեջն. տան տերն օթաղիցն էբոր դուս ելաւ, տանու մուկն իր բնիցն դուս կուգա, և իր յընկերն կկանչե, որ վախից դողալով իրան ասաց. ապայ դու էսենց կուտես, ես լաւ կուդեմ։ Իմ խոտերն, իմ տակ... իկներն անվախ, և բե դաղտաղա ուտել քան թէ ուտել հանապղ ձեր պատուական կերակրրեր վախի և դադտաղի մեջ...

Խրատ

Մեծատանց վրա նախանձում եմք, էբոր. մինակ իրանց մեծութին տեսնումք, ամմա, ամա օվ որ իրանց դրտութին, էրանց ճաֆա կճանաչէ էնտուր խեղճ էն գալիս։ Քիչ ապրանք առանց դրտմութեն լաւ է քան շատ ապրանք դրտմութենի մեջ...

27. ՄԻՆ ԿՆԻԿ, ՄԻՆ ՀԱՒ...

Մեկ օր մին [կնիկ] մին [հաւ] ուներ, որ ամեն օր մին ձու էր ածում, էն կնիկն իրան ֆիքիրի մեջն ասաց. չունքի իմ հաւն օրն մին-մին ձուա ածում, եկեր իրան շատ կուտ կտամ, մեկի աբիլն երկու կածէ, ապայ շատ կուտ տվեց հաւն. էնչանք կիրացաւ, որ էլ ձու չածեց։

Խրատ

Ջագահութեն փախիր։ Էն փոքր որ աստված քեզ տուելա, էնտուց ռազի կացիր, օվ որ շատ գուզէ ամեն կկորցնէ...

28. ՄԻՆ ԿՆԻԿ ԱԳԱՀ

Մին կնիկ մին հավ ուներ, որ ամեն որ կածեր մին ոսկե ձու։ Էն կնիկն ասաց. ալպետթե հաւի փորի մեջն պիտի մին ոսկե մատան լինի, ապայ հաւն մորթեց, փորն ճղեց ամայ էն կնիկն ըսկի զատ փորի միչումն չը գտաւ, ապայ իր ագահութենիցն ամեն կորուց, և ըսկի զատ չշահեց...

Խրատ

Էրնեկ ընտուր, որ քիչ զատին ռազիա, ագահ մարդ շուտ հետ կկորցնէ ինչոր ունի, էբոր ուզումայ ինչ որ չունի։

29. ՄԻՆ ՇՈՒՆ

Մին շուն, անունն Վավուշ, մին օր Սպահանա գետումն լող տալով անցեր կենում։ Բերանումն ուներ մին մեծ կտոր միս։ Էն մսի շաքը ջրի մեջն երևում էր։ Շունն էն շաքն տեսնելով էնպես իմացաւ թէ ալպաթ մսի կտոր էր, բերանն բացաւ, որ բռնէ, ամայ զատ չգտաւ։ Եվ էն միսն, որ բերանումն էր ընկաւ գետն տարաւ...։

Խրատ

Ջագահ մարդ էն շան պեսա։ Ինչոր ունի հերկիզ ռազի չէ։ Հանապազ ուզումայ իւել ունենայ, ամա շատ հետ ողջուկել կկորցէ...

30. ՄԻՆ ՀԱԼԵՎՈՐ ՄԱՐԴ ՈՒ ՄԱՀ

Մին հալևոր մարդ գնացեր էր ջանկալիցն փետ բերեր իր տունն։ Շալակի վրա ծանտր էր, ծանտրութենեն դադրաւ ընկաւ, մահ կանչեց իրան համար։

Մահն էն սահաթն իրան երևաց և ասաց թէ ի՞նչ բան ունիս ինձի հետ, որ ինձի կանչեցիր։ Ասաց հալևորն թէ ես կանչեցի որ ինձ օգնութին անես, որ էս բեռ փետն վեր կալնես...

Խրատ

Որչանք որ չարչարանք և ջաֆայ ադամայ որդույն շատ ըլնի, մահին ռազի չի ըլնիլ...

31. ԱՅԾԵԱՄ ՈՒ ԿՈՎԵՐ

Ջեյրան որսարարի վախիցն փախաւ, մին գոմ մտաւ։ էն տեղ կովեր կեր՝ աղաչեց իրանց թողնին մին սահաթ էստեղ պահուիմ։ Կովերն ասացին. էստեղ քու պահուելու տեղ չէ, ընտուր համար որ էս տանն նօքար կա, տեր կա, տղա կայ, ամեն սահաթ գոգան ի երթան, քեզ կբռնեն։ Այծեամն ասաց. եթե դուք, նշանց չեք տալ, մահ չըկայ։ էն խօսքի վրա նօքարն եկաւ, այծեամն փախաւ խոտի տակն։ Նոքարն չիմացաւ, դուրս յելաւ, դուռն ամրեց գնաց. էն ժամանակ ջեյրանին սիրտն պրկաւ, էլ չէր վախում։ Մեծ եղն ասաց. այմէ մին անմիտք նօքարն խափելն հեշտա, ամա տան տերն որ աչքն բացա ամեն տեղն կբնտրտե, ամեն բանն կիմանայ, չի յըլնիր որ խափես իրան, կու բռնէ զքեզ։ Մին սահաթից յետ տան տերն եկաւ մտաւ գոմն. էս դիմն էն դիմն մանգուգեր, էն խոտերին ձեռ տվեց, ջեյրանն գտաւ, բռնեց ու մորթեց...

Խրատ

Այծեամն որ կփախչի նման է մեղաւոր մարդին, որ իր մեխքիցն չի յուզեր փախնի, ամա այն ճամփից ամեն օր ինել երկար լինի։ էն նօքարն որ ջեյրանն չի տեսնիլ խոստովանու հայրա, էբոր խոստովանիս մեծ մեղքն մեծ, որ քեզ կտանի դժոխքն, ամոթով չես ասել, խոստովանահօրն նօքարի նման կխաբես, ամա տան տերն որ աստվածա, էբոր գուգայ ամենն խաբարայ, ընտուր համար այն իսկի բան չի պահուիր։ Աստված չես կարեր խաբեր, գուգայ, կտեսնի կուբռնէ կսպաննէ, դժոխք կուցգէ...

ИЗ ЛИТЕРАТУРНОГО НАСЛЕДСТВА ЕГИЯ МУШЕГЯНА

АКПЕР ЕРЕВАНЛЫ

(Резюме)

Одним из значительных представителей истории армянской культуры является Егия Мушегян (1689—1750/51 гг.). Долгие годы он жил в Тавризе, имел тесные связи со многими странами, в том числе с северным Азербайджаном, особенно Шемахой и Джульфой.

Будучи в Астрахани в 1724 г., Егия Мушегян по политическим соображениям был арестован царским правительством. Во время ареста были конфискованы личные дела Мушегяна, впоследствии сданные в госархив. В личном деле Мушегяна сохранились письма, словари, материалы, касающиеся истории, медицины, геометрии, математики, астрономии, написанные им собственноручно. Особенно ценными являются следующие литературные материалы, которые он собрал и написал в Тавризе в течение 1717—1724 гг.:

1. «Книга песен». В ней армянским шрифтом записано множество стихов азербайджанских поэтов и ашугов, стихи армянских поэтов и ашугов на азербайджанском языке, азербайджанские баяты, пословицы, поговорки, загадки и т. д. «Книга песен» является одним из ценнейших первоисточников для истории азербайджанской литературы.

2. «Песня пастухов в ночь рождения спасителя Христа». Пьеса из 6 картин. Является переводом из французского на армянский язык.

3. Басни. Общее количество 31. Записаны со слов сказителей. Учитывая ценность этих басен, мы приводим их полный текст на армянском языке.